ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԵՐԵՎԱՆ 2017

Հավելված

ՀՀ ոստիկանության պետի
« »_____20 թ № -Ա
հրամանի

ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Յ Ց

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ընտրությունների ժամանակ ոստիկանության գործողությունների ուղեցույցի» (այսուհետ՝ ՈՒղեցույց) նպատակն է ոստիկանության գործողությունների պատշաճ ամրագրումը՝ ուղղված ընտրությունների բնականոն ընթացքի ապահովմանը:

2. Ընտրությունների ժամանակ ոստիկանության գործողությունների իրավական հիմքն են կազմում «ՀՀ Սահմանադրությունը», «ՀՀ ընտրական օրենսգիրքը», «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները, սույն «ՈՒղեցույցը» և այլ իրավական ակտեր:

3. «Ուղեցույցին» կցված են ընտրական իրավունքի ոլորտին վերաբերվող ՀՀ քրեական և վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքերով սահմանված հանցագործությունների և վարչական իրավախախտումների հոդվածները, «ՀՀ ընտրական օրենսգրքով» սահմանված ընտրական ցուցակներին ներկայացվող պահանջները և ոստիկանության ծառայողների համար նախատեսված սահմանափակումները, ինչպես նաև ՀՀ ոստիկանության պետի հրամանով հաստատված ընտրական տեղամասում ծառայության նշանակված ոստիկանության վերակարգի ավագին տրվող «Ծառայողական գրքույկը»:

2. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

4. Ոստիկանության կենտրոնական և տարածքային մարմինները, դրանց ծառայություններն ու ստորաբաժանումները պարտավոր են ապահովել ընտրությունների անցկացման բնականոն ընթացքը, ընտրական հանձնաժողովների ու դրանց անդամների անկաշկանդ գործունեությունը: Ոստիկանությունը ընտրությունների հետ կապված միջոցառումներում ապահովում է պատշաճ կարգ ու կանոն, ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջով աջակցում հանձնաժողովներին, ապահովում է ընտրական փաստաթղթերի անվտանգ տեղափոխումն ու դրանց պահպանումն ընտրական հանձնաժողովներում ***(ՀՀ ԸՕ 55-րդ հոդված):***

5. Ընտրական հանձնաժողովների հետ փոխհամագործակցությունն ապահովելու, ընտրություններին ներգրավված ոստիկանության ծառայողների գործողությունները համակարգելու և ուղղորդելու նպատակով ՀՀ ոստիկանությունում և ոստիկանության տարածքային մարմիններում ձևավորվում են Օպերատիվ շտաբներ, մշակվում և հաստատվում են միջոցառումների պլաններ:

3. ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐ ԳՈՐԾՈՒՂՎՈՂ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Ընտրությունների ընթացքում պատշաճ հասարակական կարգ և անվտանգություն ապահովելու նպատակով ոստիկանության տարածքային մարմիններում ձևավորվում են ոստիկանության հետևյալ վերակարգերը՝

1) **պահակետ** - վայր կամ տարածքի մաս, որտեղ ոստիկանության ծառայողներն իրականացնում են հասարակական կարգի պահպանությանն ուղղված՝ իրենց վրա դրված պարտականությունները:

Պահակետը նշանակվում է այն վայրում, որտեղ անհրաժեշտ է ծառայողի մշտական ներկայությունը:

2) **պարեկային խումբ** - հասարակական կարգի պահպանության գործընթացում ներգրավված ոստիկանության կարգախումբ՝ բաղկացած երկու և ավելի պարեկներից, որոնք սահմանված երթուղիներում (տարածքներում), միասնական ղեկավարման ներքո իրականացնում են համալիր գործառույթներ:

3) **օպերատիվ խումբ** - ոստիկանության տարբեր ստորաբաժանումների ծառայողներից ձևավորված խումբ, որն արագ արձագանքում է տվյալ վարչական տարածքից ստացված հանցագործությունների կամ իրավախախտումների վերաբերյալ հաղորդումներին:

4) **ուղեկցող խումբ** - մեկից ավելի ոստիկաններից բաղկացած զինված վերակարգ, որն օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում պարեկային ավտոմեքենայով ընթացքի ժամանակ ապահովում է տրանսպորտային միջոցի կամ շարասյան երթևեկության անվտանգությունը:

5) **պահեստային խումբ** - ոստիկանության տարածքային մարմինների պետերի ենթակայության տակ գործող ծառայողներից ձևավորված խումբ, որը նախատեսված է օպերատիվ իրավիճակի բարդացման դեպքում, հատուկ առաջադրանքներ կատարելու և ծառայության մեջ ընդգրկված ուժերին աջակցելու համար:

7. Ոստիկանության ծառայությունն ընտրական տեղամասերում սկսվում է քվեարկության նախորդ օրը: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից ընտրական

փաստաթղթերը ընտրական տեղամասեր տեղափոխելիս ոստիկանության ծառայողները ոստիկանության մեքենայով ապահովում են ուղեկցումը:

8. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը չհրկիզվող պահարանը փակում և փակման մասը թղթով սոսնձում է: Սոսնձված թղթի վրա ստորագրում են տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը. հանձնաժողովի մյուս անդամները և վստահված անձինք ևս կարող են ստորագրել սոսնձված թղթի վրա ***(ՀՀ ԿԸՀ 17.06.2016թ. N 38-Ն որոշում):***

9. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը չհրկիզվող պահարանը հանձնում է պահպանման ոստիկանության ծառայողներին, իսկ քվեարկության օրը, ստուգելով պահարանին սոսնձված թղթի ամբողջականությունը, ոստիկանության ծառայողներից ընդունում է պահարանը: Պահարանը պահպանության հանձնելու և ոստիկանության ծառայողներից ընդունելու վերաբերյալ կազմվում է արձանագրություն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում ***(ՀՀ ԿԸՀ 17.06.2016թ. N 38-Ն որոշում):***

10. Չհրկիզվող պահարանի պահպանությունն իրականացվում է զենքով: Պահարանի պահպանության և փակման մասին սոսնձված թղթի ամբողջականության համար պատասխանատվությունը կրում է այն ընդունած ոստիկանության ծառայողը:

11. Ընտրական տեղամասում ծառայության նշանակված ոստիկանության վերակարգի ավագին տրվում է ընտրական տեղամասի համարով և վերակարգում ընդգրկված ծառայողների անվան և ազգանվան նշումով «Ծառայողական գրքույկ», որում գրի են առնվում հաղորդումները, հաղորդում տվող անձի տվյալները, հաղորդման համառոտ բովանդակությունը և ձեռնարկված միջոցառումները: Ընտրությունների ավարտից հետո տարածքային մարմնի պետի մակագրությամբ «Ծառայողական գրքույկը» հանձնվում է քարտուղարություն:

12. Քվեարկության օրը ընտրական տեղամասում ծառայության նշանակված վերակարգի ավագը ժամը 07:00-ին ներկայանում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, որի մասին գրառում է կատարում «Ծառայողական գրքույկի» «Նշումներ» սյունյակում:

13. Ոստիկանության ծառայողները չեն կարող քվեարկության օրը գտնվել քվեարկության սենյակում: Նրանք կարող են մտնել քվեարկության սենյակ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջով և թույլտվությամբ (բացի քվեարկությանը մասնակցելու նպատակով սենյակ մտնելու դեպքի):

14. Ոստիկանության ծառայողները առանց հանձնաժողովի նախագահի թույլտվության քվեարկության սենյակ մուտք են գործում բացառիկ դեպքերում, երբ առերևույթ առկա են հանցագործության հատկանիշներ:

15. Ընտրական տեղամասերում ծառայություն իրականացնող ոստիկանության ծառայողները ընտրությունների վերաբերյալ անձանց խորհրդատվություն չեն մատուցում, իսկ անհրաժեշտության դեպքում նրանց ուղեկցում են հանձնաժողովի նախագահի մոտ:

16. Արգելվում է քվեարկության օրը տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև 50 մետր շառավղով խմբերով հավաքվելը, տեղամասային կենտրոնի մուտքին հարող տարածքում մեքենաների կուտակումը: Սույն մասի դրույթների կատարումը, ինչպես նաև այդ տարածքում հասարակական կարգի պահպանումն ապահովում են տեղամասային կենտրոնում ծառայություն իրականացնող ոստիկանության ծառայողները՝ անկախ ընտրական հանձնաժողովի պահանջից ***(ՀՀ ԸՕ 22-րդ հոդված 3-րդ մաս):***

Նշված տարածքում անձանց կամ մեքենաների կուտակումներ նկատելու կամ այդ մասին հանձնաժողովի նախագահից տեղեկանալու դեպքում ոստիկանության ծառայողները մոտենում են հավաքված անձանց (մեքենաների վարորդներին), իրազեկում ՀՀ ընտրական օրենսգրքի 22-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սահմանափակման մասին և առաջարկում հեռանալ տվյալ տարածքից (հեռացնել մեքենաները): Նշված պահանջը չկատարելու դեպքում ոստիկանության ծառայողները կուտակված անձանց (մեքենաների վարորդներին) նախազգուշացնում են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված՝ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու համար սահմանված վարչական պատասխանատվության մասին և կապի հնարավոր միջոցներով այդ մասին անմիջապես տեղեկացնում են ոստիկանության տարածքային բաժին և պահանջում ոստիկանության վերակարգ, որոնց օգնությամբ կուտակված անձինք կամ մեքենաները հեռացվում են տվյալ տարածքից: Եթե որոշ անձինք խոչընդոտում են ոստիկանության ծառայողների գործողություններին և շարունակում չկատարել ՀՀ ընտրական օրենսգրքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, ապա ոստիկանության ծառայողները զգուշացնում են «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ ու հրազենի գործադրելու իրենց լիազորության մասին և հավաքված անձանց (մեքենաների վարորդներին) բավարար ժամանակ են տրամադրում հեռանալու համար, որի լրանալուց հետո հավաքված անձինք կամ մեքենաները հարկադրաբար հեռացվում են տվյալ տարածքից, իսկ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարած անձանց նկատմամբ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածի հատկանիշներով և

254-րդ հոդվածով սահմանված կարգով կազմում են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություններ: Եթե տեղում արձանագրություն կազմելը հնարավոր չէ, ապա խախտողը ոստիկանության ծառայողի կողմից կարող է բերվել ոստիկանություն՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքիի 258-րդ հոդվածով սահմանված կարգով:

17. Արգելվում է տեղամասային կենտրոն զենքով, զինամթերքով մուտք գործելը ***(ՀՀ ԸՕ 65-րդ հոդված 3-րդ մաս):***

Ոստիկանության ծառայողը, նկատելով տեղամասային կենտրոն ցուցադրաբար զենքով մուտք գործելու փորձ կատարող կամ տեղամասում գտնվող անձի, կամ այդ մասին հանձնաժողովի նախագահից հաղորդում ստանալու դեպքում, անմիջապես մոտենում, պատշաճ ներկայանում է և հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին բերման է ենթարկում ոստիկանական վերակարգին հատկացված սենյակ, անմիջապես տեղեկացնում է ոստիկանության տարածքային բաժին և պահանջում օպերատիվ խումբ: Մինչև օպերատիվ խմբի ժամանելը պարզում է քաղաքացու ինքնությունը և զենքի պատկանելությունը: Օպերատիվ խումբը ՀՀ քրեական օրենսգրքի 154.4-րդ կամ 235-րդ հոդվածներով նախատեսված հանցագործություններ կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում անձին բերման է ենթարկում ոստիկանության բաժին, իսկ անմիջականորեն ծագած կասկածի հիման վրա՝ նաև ձերբակալում իրավախախտին ***(ՀՀ Քր. դատ. օր.-ի 180-րդ և 129-րդ հոդվածներ)***:

18. Զինծառայողները, ազգային անվտանգության և ոստիկանության զորքերում ծառայողները տեղամասային կենտրոն մուտք են գործում ոչ շարային կարգով, առանց զենքի, զինամթերքի: Քվեարկության բնականոն ընթացքի վտանգման դեպքում տեղամասային կենտրոն զենքով մուտք գործել կարող են միայն ոստիկանության ծառայողները՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ ***(ՀՀ ԸՕ 65-րդ հոդված 4-րդ մաս):***

19. Եթե քվեարկության սենյակում գտնվող ընտրողների թիվն այնքան է, որ ակնհայտորեն խաթարվում է քվեարկության բնականոն ընթացքը, ապա ընտրական հանձնաժողովի նախագահն իրավունք ունի սահմանափակելու քվեարկության սենյակում միաժամանակ գտնվող ընտրողների թիվը, բայց ոչ պակաս, քան 15 ընտրող՝ ընտրողներին քվեարկության սենյակ թողնելով հերթով՝ մեկ-մեկ: Ընտրական հանձնաժողովի կողմից սույն պահանջի կատարումն ապահովելու անհնարինության դեպքում ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջով այն իրականացվում է ոստիկանության օժանդակությամբ: Ոստիկանության ծառայողը քվեարկության սենյակի մուտքի մոտ

կազմակերպում է քաղաքացիների հերթը՝ թույլատրելով մտնել քվեարկության սենյակ մեկ-մեկ ***(ՀՀ ԸՕ 65-րդ հոդված 5-րդ մաս):***

20. Եթե քվեարկության սենյակում գտնվող դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների թիվն այնքան է, որ ակնհայտորեն խաթարում է քվեարկության բնականոն ընթացքը, ապա տեղամասային ընտրական հանձնաժողովն իրավասու է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ սահմանելու քվեարկության սենյակում միաժամանակյա գտնվելու իրավունք ունեցող դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների առավելագույն թիվը: Որոշումը պետք է համապատասխանի համաչափության սկզբունքին, և ամեն դեպքում այդ որոշմամբ սահմանված թիվը չի կարող նվազ լինել 15-ից: Այդ սահմանափակումը չի տարածվում այցելուների, միջազգային դիտորդների և վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստառադիոընկերությունների ներկայացուցիչների վրա: Ընտրական հանձնաժողովի կողմից սույն մասի կատարումն ապահովելու անհնարինության դեպքում ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջով այն իրականացվում է ոստիկանության օժանդակությամբ ***(ՀՀ ԸՕ 65-րդ հոդված 7-րդ մաս):***

Տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշման մասին հանձնաժողովի նախագահից տեղեկանալու դեպքում ոստիկանության ծառայողը մոտենում է քվեարկության սենյակից հեռացման ենթակա դիտորդներին և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին, նրանց ծանոթացնում է ընտրական հանձնաժողովի ընդունած որոշմանը և առաջարկում է դուրս գալ քվեարկության սենյակից: Նշված պահանջը չկատարելու դեպքում, ոստիկանության ծառայողը զգուշացնում է օրենքով սահմանված հարկադրանք կիրառելու իր լիազորության մասին և քվեարկության սենյակից դուրս գալու համար տրամադրում է բավարար ժամանակ: Այդ ընթացքում կապի հնարավոր միջոցներով անմիջապես տեղեկացնում է ոստիկանության տարածքային բաժին և պահանջում օժանդակ ուժեր: Տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշման համաձայն հեռացման ենթակա դիտորդներն ու զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները հարկադրաբար դուրս են բերվում քվեարկության սենյակից:

21. Եթե ընտրողը ներկայացրել է այլ անձի անձը հաստատող փաստաթուղթ, ապա մասնագետն այդ մասին տեղեկացնում է հանձնաժողովի նախագահին: Հանձնաժողովի նախագահը նման դեպքում քվեարկության սենյակ է հրավիրում ոստիկանության ծառայողներին, որոնք ձեռնարկում են օրենքով սահմանված միջոցներ ***(ՀՀ ԸՕ 66-րդ հոդված 2-րդ մաս):***

22. Եթե ընտրողն իր անձը հաստատող որևէ փաստաթղթով արդեն իսկ մասնակցել է քվեարկությանը, էկրանին հայտնվում է կարմիր նշան, ապա մասնագետը տեղեկացնում է հանձնաժողովի նախագահին: Հանձնաժողովի նախագահը նման դեպքում քվեարկության սենյակ է հրավիրում ոստիկանության ծառայողներին, որոնք ձեռնարկում են օրենքով սահմանված միջոցներ ***(ՀՀ ԸՕ 66-րդ հոդված 6-րդ մաս):***

23. 21-րդ և 22-րդ կետերում նշված խախտումների վերաբերյալ հանձնաժողովի նախագահից հաղորդում ստանալու դեպքում ոստիկանության ծառայողները հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին բերման են ենթարկում ոստիկանական վերակարգին հատկացված սենյակ, անմիջապես տեղեկացնում են ոստիկանության տարածքային բաժին և պահանջում օպերատիվ խումբ, որը տեղում արձանագրում է խախտումը և միջոցներ է ձեռնարկում հետագա ընթացքը լուծելու համար:

24. Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովը անցկացնում է երկու նիստ՝

1) ժամը 7.00-ին, որի ժամանակ հանձնաժողովը քննարկում է կազմակերպչական հարցեր.

2) քվեարկության ավարտից հետո՝ ժամը 20.00-ին, որի ժամանակ տեղամասային ընտրական հանձնաժողովը սկսում է քվեարկության արդյունքների ամփոփումը:

Նիստերին կարող են ներկա լինել՝

1) զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները.

2) միջազգային և տեղական դիտորդները: Տեղական դիտորդը նիստին կարող է ներկա լինել, եթե դիտորդի վկայականից բացի ունի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման կամ դիտորդական առաքելություն իրականացնելու վկայական.

3) կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամները.

4) յուրաքանչյուր թեկնածուի, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների մեկական վստահված անձ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.

5) թեկնածուն՝ միայն տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման նիստին:

Հանձնաժողովի անդամները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները, դիտորդները, վստահված անձինք վերնազգեստի վրա պարտադիր կարգով տեսանելի ձևով պետք է կրեն նիստում ներկա լինելու իրավունքը հավաստող վկայական ***(ՀՀ ԿԸՀ 11.08.2011թ. N 55-Ն որոշում):***

25. Նիստում ներկա լինելու իրավունքը հավաստող վկայականի ձևերը հաստատված են ՀՀ կենտրոնական ընտրական հանձաժողովի 09.11.2016թ. №119-Ն և №120-Ն

որոշումներով: Նշված վկայականները պետք է կնքված լինեն ՀՀ ԿԸՀ կնիքով և ուժի մեջ են անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում:

26. Տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների ամփոփման նիստին՝ ընտրական հանձնաժողովների նիստերին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք կարող են ներկայանալ նաև նիստը սկսվելուց՝ ժամը 20.00-ից հետո և ներկա գտնվել քվեարկության արդյունքների ամփոփման նիստին Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի կանոնակարգումներին համապատասխան ***(ՀՀ ԿԸՀ 03.08.2016թ. N 46 որոշում):***

27. Ոստիկանության ծառայողը չի կարող ներկա գտնվել տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից անցկացվող նիստերին, որևէ եղանակով ստանալ և այլ անձի փոխանցել քվեարկության ամփոփման արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն:

28. Տեղամասային ընտրական հանձնաժողովների աշխատանքների ավարտից հետո ոստիկանության ծառայողները այդ մասին տեղեկացնում են ոստիկանության տարածքային մարմին և պահանջում ուղեկցող վերակարգ: ՈՒղեկցող վերակարգը ոստիկանության մեքենայով ուղեկցում է հանձնաժողովի նախագահի կողմից ընտրական փաստաթղթերի տեղափոխումը:

29. Արգելվում է ընտրական փաստաթղթերի տեղափոխումը ոստիկանության մեքենայով: Ոստիկանության ծառայողները չեն կարող գտնվել ընտրական փաստաթղթերը տեղափոխող մեքենայում:

30. Ընտրությունների ավարտից հետո տարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովներում ծառայության նշանակված ոստիկանության ծառայողները վերադառնում են ոստիկանության տարածքային ստորաբաժանումներ և սպասում մինչև «Ավարտակոչ» հայտարարելը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

1. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հոդված 8. Ընտրությունների հրապարակայնությունը

7. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ՝ քվեարկության օրվանից առաջ 30-րդ, 20-րդ և 10-րդ օրը, բնակչության պետական ռեգիստրը վարող Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին) հրապարակում է Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը՝ նշելով նաև ըստ գտնվելու վայրի ընտրողների և հաշվառում չունեցող ընտրողների թիվը: Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ՝ քվեարկության նախորդ օրը, լիազոր մարմինը հրապարակում է Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը՝ նշելով նաև ըստ գտնվելու վայրի ընտրողների, հաշվառում չունեցող ընտրողների, ընտրական տեղամասեր գործուղվող ոստիկանության ծառայողների, ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատությունում գտնվող ընտրողների ընդհանուր թիվը:

Հոդված 10. Ընտրողներին ցուցակում ընդգրկելը

6. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը (այսուհետ՝ ոստիկանություն) քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 14.00-ն, կազմում է քվեարկության օրն ընտրական տեղամասեր գործուղվող ոստիկանության ծառայողների ցուցակը՝ նշելով ոստիկանության ծառայողների ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, ամիսը և օրը (այսուհետ՝ ամսաթիվ), հաշվառման վայրի հասցեն և ընտրական տեղամասի համարը: Լիազոր մարմինը, ըստ այդ ցուցակների, ոստիկանության ծառայողներին ժամանակավորապես հանում է իրենց հաշվառման վայրի ընտրողների ցուցակից և ընդգրկում է ըստ գործուղվող տեղամասերի ընտրողների ցուցակում:

9. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ՝ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 50 օր, 10 օր և 6 օր առաջ, պաշտպանության նախարարությունը, ազգային անվտանգության ծառայությունը և ոստիկանությունը լիազոր մարմին ու Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացնում համապատասխանաբար զորամասերում, ազգային անվտանգության և ոստիկանության զորքերում հաշվառված ընտրողների թիվը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով:

Հոդված 11. Ընտրողների ցուցակներին ներկայացվող պահանջները

1. Ընտրողների ցուցակները կազմվում են ըստ ընտրողների հաշվառման վայրի հասցեների: Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տեղամասի ընտրողների ցուցակում համարակալման շարունակականությամբ ըստ առանձին բաժինների ներառվում են նաև ըստ գտնվելու վայրի ընտրողների, հաշվառում չունեցող ընտրողների, ընտրական տեղամասեր գործուղվող ոստիկանության ծառայողների ցուցակները:

2. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Հոդված 19 Նախընտրական քարոզչության հիմնական սկզբունքները

5. Արգելվում է նախընտրական քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել՝

1) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև պետական և համայնքային ծառայողներին (բացառությամբ Ազգային ժողովի պատգամավորների), ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի աշխատողներին՝ իրենց լիազորություններն իրականացնելիս.

2) դատավորներին, դատախազներին, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության ծառայողներին, ոստիկանությունում, ազգային անվտանգության, քրեակատարողական, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություններում ծառայողներին, զինծառայողներին.

3) ընտրական հանձնաժողովների անդամներին:

Հոդված 33. Վստահված անձի կարգավիճակը

3. Վստահված անձ չեն կարող լինել դատավորները, դատախազները, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության ծառայողները, ոստիկանությունում, ազգային անվտանգության ծառայությունում, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում, քրեակատարողական ծառայությունում ծառայողները, զինծառայողները, դիտորդները, թեկնածուները, ընտրական հանձնաժողովների անդամները:

Հոդված 41. Ընտրական հանձնաժողովներ կազմավորելու հիմունքները

2. Ընտրական հանձնաժողովի անդամ չեն կարող լինել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149-154.6-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների, ինչպես նաև դիտավորությամբ կատարված միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների համար դատվածություն ունեցող անձինք: Տարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամ չեն կարող լինել Ազգային ժողովի պատգամավորները, նախարարները և նրանց տեղակալները, համայնքների ղեկավարները, մարզպետները և նրանց տեղակալները, դատավորները, դատախազները, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության ծառայողները, ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատական ակտերի հարկադիր կատարման, քրեակատարողական ծառայություններում ծառայողները, զինծառայողները, վստահված անձինք, ընտրություններին մասնակցող կուսակցության, համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուի լիազոր ներկայացուցիչները, դիտորդները, թեկնածուները: Տարածքային ընտրական հանձնաժողովների անդամ չեն կարող լինել նաև ավագանու անդամները:

Հոդված 82. Առաջադրման սահմանափակումները

1. Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու չեն կարող առաջադրվել դատավորները, դատախազները, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության ծառայողները, ոստիկանությունում, ազգային անվտանգությունում, դատական ակտերի հարկադիր կատարման, փրկարարական, հարկային, մաքսային մարմիններում, քրեակատարողական ծառայությունում ծառայողները, զինծառայողները, ընտրական հանձնաժողովների անդամները:

Հոդված 107. Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուներին առաջադրվող պահանջները

2. Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածու չեն կարող առաջադրվել դատավորները, դատախազները, քննչական կոմիտեի, հատուկ քննչական, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ծառայողները, ոստիկանությունում, ազգային անվտանգությունում, փրկարարական, հարկային, մաքսային մարմիններում, քրեակատարողական ծառայությունում ծառայողները, զինծառայողները, ընտրական հանձնաժողովների անդամները:

Հոդված 126. Ընտրվելու իրավունքը

2. Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանու անդամի թեկնածու չեն կարող առաջադրվել դատավորները, դատախազները, քննչական կոմիտեի, հատուկ քննչական, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ծառայողները, ոստիկանությունում, ազգային անվտանգությունում, փրկարարական, հարկային, մաքսային մարմիններում, քրեակատարողական ծառայությունում ծառայողները, զինծառայողները, ընտրական հանձնաժողովի անդամները:

ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ՝ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 149. Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը

1. Քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացմանը կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքին խոչընդոտելը, ինչպես նաև ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի կամ նրա վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի յոթհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ վեց ամսից մեկ տարի ժամկետով՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում որևէ պաշտոն զբաղեցնելու, ինչպես նաև ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ կամ դիտորդ լինելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքները, որոնք՝

1) կատարվել են գույքին վնաս պատճառելու սպառնալիքով,

2) կատարվել են նյութապես շահագրգռելով,

3) զուգորդվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,

4) կատարվել են պաշտոնեական դիրքն օգտագործելով,

5) կատարվել են մի խումբ անձանց կողմից՝

6) զուգորդվել է անձին ազատությունից զրկելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից մինչև հինգ տարի ժամկետով՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում որևէ պաշտոն զբաղեցնելու, ինչպես նաև ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ կամ դիտորդ լինելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

(149-րդ հոդվածը խմբ., լրաց. 22.12.06 ՀՕ-2-Ն, խմբ. 26.05.11 ՀՕ-166-Ն, փոփ., լրաց. 20.10.16 ՀՕ-160-Ն)

Հոդված 150. Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը

Հանրաքվեի կամ ընտրությունների ընթացքում ձայներն ակնհայտ սխալ հաշվելը կամ ընտրությունների արդյունքները, այդ թվում՝ արձանագրությունները, դրանց պատճենները, այլ ընտրական փաստաթղթերը և դրանց քաղվածքները ակնհայտ սխալ տվյալներով հաստատելը, համակարգչում ակնհայտ սխալ տվյալներ մուտքագրելը, մուտքագրված տվյալները փոփոխելը, ինչպես նաև որևէ այլ եղանակով ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը կամ այդ նպատակով ընտրական փաստաթղթերը վերադաս ընտրական մարմիններին սահմանված ժամկետում չներկայացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում որևէ պաշտոն զբաղեցնելու, ինչպես նաև ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ կամ դիտորդ լինելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

(150-րդ հոդվածը խմբ. 22.12.06 ՀՕ-2-Ն, փոփ. 25.05.16 ՀՕ-57-Ն, լրաց. 20.10.16 ՀՕ-160-Ն)

Հոդված 152. Ընտրողների ցուցակները կազմելու, դրանք քաղաքացիներին և կուսակցություններին տրամադրելու կամ հրապարակելու կարգը խախտելը

Ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ընտրողների ցուցակները քաղաքացիներին կամ կուսակցություններին տրամադրելու համար սահմանված կարգը խախտելը, դրանք չտրամադրելը կամ սահմանված կարգով դրանք չհրապարակելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից հազարհինգհարյուրապատիկի չափով:

Ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ընտրողների ցուցակները կազմելու համար սահմանված կարգը խախտելով կեղծիքներ կատարելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

(152-րդ հոդվածը փոփ. 22.12.06 ՀՕ-2-Ն, 26.05.11 ՀՕ-166-Ն)

Հոդված 153. Մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը

Կեղծ տվյալներ հայտնելու, կեղծ փաստաթուղթ ներկայացնելու կամ որևէ այլ եղանակով մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում որևէ պաշտոն զբաղեցնելու, ինչպես նաև ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ կամ դիտորդ լինելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

(153-րդ հոդվածը խմբ. 22.12.06 ՀՕ-2-Ն, 26.05.11 ՀՕ-166-Ն, փոփ., լրաց. 20.10.16 ՀՕ-160-Ն)

Հոդված 154. Քվեարկության գաղտնիությունը խախտելը

Քվեարկության գաղտնիությունը խախտելու նպատակով ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելը, քվեարկության արդյունքը բացահայտելու նպատակով քվեարկած քվեաթերթիկը ստուգելը, քվեարկության խցիկ (սենյակ) մուտք գործելը, ինչպես նաև քվեարկության գաղտնիությունն այլ կերպ խախտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից երեք տարի ժամկետով:

(154-րդ հոդվածը փոփ. 22.12.06 ՀՕ-2-Ն, խմբ. 26.05.11 ՀՕ-166-Ն)

Հոդված 154[1]. Կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշեր, կտրոններ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշեր, կտրոններ հանձնելը կամ իրացնելը

(վերնագիրը լրաց. 25.05.16 ՀՕ-57-Ն)

1. Անձնական դրդումներով կամ խմբային շահերից ելնելով՝ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշեր, կտրոններ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշեր, կտրոններ հանձնելը կամ այլ եղանակով իրացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում որևէ պաշտոն զբաղեցնելու, ինչպես նաև ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ կամ դիտորդ լինելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում որևէ պաշտոն զբաղեցնելու, ինչպես նաև ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ կամ դիտորդ լինելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

(154[1] -ին հոդվածը լրաց. 22.12.06 ՀՕ-2-Ն, լրաց., փոփ. 25.05.16 ՀՕ-57-Ն, լրաց. 20.10.16 ՀՕ-160-Ն)

Հոդված 154.2 Ընտրողի կողմից թեկնածուներից, կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից), հանրաքվեի քարոզչական նախաձեռնություններից կաշառք ստանալը կամ թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների), հանրաքվեի քարոզչական նախաձեռնությունների կողմից ընտրողներին կաշառք տալը կամ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելը

(վերնագիրը խմբ. 25.05.16 ՀՕ-57-Ն)

1. Թեկնածուներից, կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից), հանրաքվեի քարոզչական նախաձեռնություններից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու կամ ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու պայմանով թեկնածուներից, կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից), հանրաքվեի քարոզչական նախաձեռնություններից անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար կաշառք ստանալը, այսինքն՝ դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալը կամ պահանջելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

2. Ընտրողին թեկնածուներից, կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից), հանրաքվեի քարոզչական նախաձեռնություններից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրություններին մասնակցելուն կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելուն հարկադրելը, որը կատարվել է գույքին վնաս պատճառելով կամ գույքին վնաս պատճառելու սպառնալիքով, բռնությամբ կամ բռնություն գործադրելու սպառնալիքով, անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ իր ներկայացրած անձի (կուսակցության, կուսակցության դաշինքի) համար կաշառք տալը, այսինքն՝ դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը կամ տրամադրելը՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

3. Կաշառք ստացող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե այդ անձը մինչև իրավապահ մարմիններին կատարված հանցանքի մասին հայտնի դառնալը,

բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում կաշառք ստանալու մասին կամավոր հայտնել է իրավապահ մարմիններին և աջակցել հանցագործությունը բացահայտելուն:

(154[2] -րդ հոդվածը լրաց. 22.12.06 ՀՕ-2-Ն, խմբ. 26.05.11 ՀՕ-166-Ն, 25.05.16 ՀՕ- 57-Ն)

Հոդված 154.4. Զենքով՝ տեղամասային կենտրոն մուտք գործելը

Քվեարկության օրը զենք կրելու իրավունք ունեցող անձի կողմից զենքով ցուցադրաբար տեղամասային կենտրոն մուտք գործելն առանց ծառայողական անհրաժեշտության՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

(154[4]-րդ հոդվածը լրաց. 22.12.06 ՀՕ-2-Ն, խմբ. 26.05.11 ՀՕ-166-Ն, փոփ. 25.05.16 ՀՕ-57-Ն)

Հոդված 154.5. Վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին ծանոթանալուն խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճեններ չտալը

Վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին սահմանված դեպքերում և կարգով ծանոթանալուն խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճենները, քաղվածքները չտալը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

(154.5-րդ հոդվածը փոփ. 22.12.06 ՀՕ-2-Ն, 26.05.11 ՀՕ-166-Ն օրենքներ)

Հոդված 154.6. Ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը

Ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից իր լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որի արդյունքում անհնարին է դարձել ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության կամ ընտրության արդյունքների ամփոփումը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում որևէ պաշտոն զբաղեցնելու, ինչպես նաև ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ կամ դիտորդ լինելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

(154[6]-րդ հոդվածը լրաց. 26.05.11 ՀՕ-166-Ն, փոփ. 20.10.16 ՀՕ-160-Ն)

Հոդված 154.7. Քվեատուփը, ընտրողների ստորագրած ցուցակը, տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը, հանձնաժողովի կնիքը, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի անհատական կնիքը, ինքնասոսնձվող դրոշմանիշը, ընտրողի վերաբերյալ տվյալներ պարունակող քվեարկության կտրոնը կամ համարակալված կտրոնը, ընտրողների էլեկտրոնային գրանցման տեխնիկական սարքավորումը, կառավարության կողմից ընտրված մասնագիտացված կազմակերպության կողմից տեղադրված տեսախցիկը, ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը կամ ընտրական փաստաթղթերի փաթեթը հափշտակելը

Անձնական դրդումներով կամ խմբային շահերից ելնելով՝ քվեատուփը, ընտրողների ստորագրած ցուցակը, տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը, հանձնաժողովի կնիքը, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի անհատական կնիքը, ինքնասոսնձվող դրոշմանիշը, ընտրողի վերաբերյալ տվյալներ պարունակող քվեարկության կտրոնը կամ համարակալված կտրոնը, ընտրողների էլեկտրոնային գրանցման տեխնիկական սարքավորումը, կառավարության կողմից ընտրված մասնագիտացված կազմակերպության տեղադրած տեսախցիկը, ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը կամ ընտրական փաստաթղթերի փաթեթը հափշտակելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում որևէ պաշտոն զբաղեցնելու, ինչպես նաև ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ կամ դիտորդ լինելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

(154.7-րդ հոդվածը լրաց. 20.10.16 ՀՕ-160-Ն)

Հոդված 154.8. Այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ սուտ հայտարարություն տալը կամ կեղծ ստորագրությամբ հայտարարություն դիմումին կից ներկայացնելը

Այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ դիտավորությամբ սուտ հայտարարություն տալը կամ կեղծ ստորագրությամբ հայտարարություն (ոչ հայտարարատուի կողմից կամ մտացածին անձի անունից ստորագրված հայտարարություն) դիմումին կից ներկայացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում որևէ պաշտոն զբաղեցնելու, ինչպես նաև ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ կամ դիտորդ լինելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ անփութությամբ սուտ հայտարարություն տալը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ մինչև երկու տարի ժամկետով:

(154.8-րդ հոդվածը լրաց. 20.10.16 ՀՕ-160-Ն)

ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ՝ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Հոդված 40.1. Քվեարկության օրը կամ դրան նախորդող օրը քարոզչություն կատարելը

(վերնագիրը խմբ. 25.05.16 ՀՕ-55-Ն)

Քվեարկության և դրան նախորդող օրը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների միջոցով քարոզչություն կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից մինչև վեցհարյուրապատիկի չափով:

Քվեարկության և դրան նախորդող օրը տպագիր մամուլի, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների (այդ թվում՝ արբանյակային հեռարձակման ժամանակ) միջոցով քարոզչություն կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ լրատվական գործունեություն իրականացնող անձի կամ ղեկավարի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև յոթհարյուրապատիկի չափով:

(40[1] -րդ հոդվածը փոփ. 02.08.91, 02.09.93 ՀՕ-79, 19.05.95 ՀՕ-137, 19.03.99 ՀՕ-287, խմբ. 26.05.11 ՀՕ-165-Ն, 25.05.16 ՀՕ-55-Ն)

Հոդված 40.2. Ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի անդամի կողմից քվեարկության արդյունքների արձանագրությունը չստորագրելը

(վերնագիրը խմբ. 25.05.16 ՀՕ-55-Ն)

Ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի անդամի կողմից քվեարկության արդյունքների արձանագրությունը չստորագրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

(40[2]-րդ հոդվածը լրաց. 19.03.99 ՀՕ-287, խմբ. 26.05.11 ՀՕ-165-Ն, 25.05.16 ՀՕ-55-Ն)

Հոդված 40.3. Թեկնածուի (կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի) կողմից նախընտրական հիմնադրամ չբացելը կամ հիմնադրամում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագիր չներկայացնելը

(վերնագիրը խմբ. 25.05.16 ՀՕ-55-Ն)

Թեկնածուի (կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի) կողմից նախընտրական հիմնադրամ չբացելը, երբ դրա բացելը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված պարտականություն է, կամ նախընտրական հիմնադրամում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագիր չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

(40[3]-րդ հոդվածը փոփ. 02.08.91, 19.05.95 ՀՕ-137, 19.03.99 ՀՕ-287, խմբ. 25.05.16 ՀՕ-55-Ն)

Հոդված 40.4. Ընտրական կամ հանրաքվեի փաստաթղթերի պարկը տեղամասային ընտրական հանձնաժողովում սահմանված կարգով չփակելը

(վերնագիրը խմբ. 25.05.16 ՀՕ-55-Ն)

Ընտրական կամ հանրաքվեի փաստաթղթերի պարկը տեղամասային ընտրական հանձնաժողովում սահմանված կարգով չփակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

(40[4]-րդ հոդվածը փոփ. 02.08.91, 02.09.93 ՀՕ-79, 19.03.99 ՀՕ-287, խմբ. 26.05.11 ՀՕ-165-Ն, 25.05.16 ՀՕ-55-Ն)

Հոդված 40.6. Ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը չլրացնելը

(նոր՝ 2-րդ 40[6]-րդ հոդվածն ընդունվել է 19.03.99 ՀՕ-287, խմբ. 25.05.16 ՀՕ 55-Ն)

Ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը չլրացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի մինչև երեքհարյուրապատիկի չափով:

(40[6]-րդ հոդվածը լրաց. 19.03.99 ՀՕ-287, խմբ. 25.05.16 ՀՕ-55-Ն)

Հոդված 40.7. Զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված կարգը խախտելը

Զանգվածային լրատվության միջոցներով, բացառությամբ կուսակցությունների հիմնադրած մամուլի միջոցների, թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական քարոզչության իրականացման համար հավասար պայմաններ՝ եթերաժամ կամ ծավալ, սակագին և այլն չապահովելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ լրատվական գործունեություն իրականացնողի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից մինչև վեցհարյուրապատիկի չափով:

Նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում հեռուստառադիոընկերությամբ (հեռուստաընկերությամբ կամ ռադիոընկերությամբ) հեռարձակվող լրատվական հաղորդումներում թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից իրականացվող նախընտրական քարոզչության վերաբերյալ ակնհայտ կողմնակալ և (կամ) գնահատականներով տեղեկատվություն ներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ լրատվական գործունեություն իրականացնողի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով:

Օրենքով սահմանված կարգով որպես թեկնածու գրանցվելուց հետո՝ մինչև ընտրությունների ավարտն ընկած ժամանակահատվածը, հեռուստա-ռադիոընկերությունների աշխատակիցների կողմից հեռուստառադիոընկերությամբ (հեռուստաընկերությամբ կամ ռադիոընկերությամբ) ընտրությունները լուսաբանելը և (կամ) հեռուստառադիոհաղորդում (հեռուստահաղորդում կամ ռադիոհաղորդում) վարելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ լրատվական գործունեություն իրականացնողի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով:

Նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում նախընտրական քարոզչությանը վերաբերող հեռուստա-ռադիոհաղորդումները (հեռուստահաղորդումները կամ ռադիոհաղորդումները) առևտրային գովազդով ընդմիջելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ լրատվական գործունեություն իրականացնող անձի կամ ղեկավարի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

(40[7]-րդ հոդվածը լրաց. 19.03.99 ՀՕ-287, խմբ. 26.05.11 ՀՕ-165-Ն, 25.05.16 ՀՕ-55-Ն)

Հոդված 40.8. Քարոզչություն կատարելու իրավունք չունեցող անձանց կողմից նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելը և քարոզչական նյութեր տարածելը

(վերնագիրը խմբ. 25.05.16 ՀՕ-55-Ն)

Քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելու իրավունք չունեցող անձանց կողմից նախընտրական քարոզչություն կատարելը և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

(40[8]-րդ հոդվածը լրաց. 26.05.11 ՀՕ-165-Ն, խմբ. 25.05.16 ՀՕ-55-Ն)

Հոդված 40.9. Թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) վարկանիշների, ինչպես նաև հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների հրապարակման համար օրենքով սահմանված կարգը խախտելը

(վերնագիրը խմբ. 25.05.16 ՀՕ-55-Ն)

Նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) վարկանիշների, ինչպես նաև հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ սոցիոլոգիական հարցում հրապարակելիս դրանում օրենքով նախատեսված տեղեկությունները չնշելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ ֆիզիկական անձանց նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով, հարցում իրականացնող կազմակերպության նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

Քվեարկության նախորդ օրը, ինչպես նաև քվեարկության օրը՝ մինչև ժամը 20.00-ն, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստատեսությամբ, ռադիոյով կամ տպագիր մամուլով թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների),

ինչպես նաև հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքները, ինչպես նաև դրանց վերաբերյալ տեղեկատվություն հրապարակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ հրապարակում իրականացրած կազմակերպության նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի ութհարյուրապատիկի չափով:

Միևնույն ընտրության (հանրաքվեի) ժամանակ նույն խախտումը մեկից ավելի անգամ կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ հրապարակում իրականացրած կազմակերպության նկատմամբ՝ երկրորդ հրապարակման դեպքի համար, նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով, իսկ յուրաքանչյուր հաջորդ խախտման համար նախորդ դեպքի համար սահմանված տուգանքի կրկնապատիկի չափով:

(40[9]-րդ հոդվածը լրաց. 26.05.11 ՀՕ-165-Ն, խմբ. 25.05.16 ՀՕ-55-Ն)

Հոդված 40.10. Թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից ընտրողներին դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ տալը (խոստանալը) կամ ծառայություններ մատուցելը (խոստանալը)

Նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով կամ բարեգործության անվան տակ ընտրողներին, ինչպես նաև հանրաքվեի մասնակիցներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ տալը (խոստանալը) կամ ծառայություններ մատուցելը (խոստանալը), եթե դրա համար քրեական պատասխանատվություն նախատեսված չէ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև երկուհազարապատիկի չափով:

Բարեգործության հետ միաժամանակ նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից մինչև երկուսուկեսհազարապատիկի չափով:

(40[10]-րդ հոդվածը լրաց. 26.05.11 ՀՕ-165-Ն, խմբ. 25.05.16 ՀՕ-55-Ն)

Հոդված 40.11. Օրենքով սահմանված վավերապայմանների բացակայությամբ քարոզչական տպագիր նյութեր տարածելը, քարոզչական պաստառները պոկելը, պատռելը կամ դրանց վրա գրառումներ կատարելը

(վերնագիրը խմբ. 25.05.16 ՀՕ-55-Ն)

Նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով նախատեսված ժամանակահատվածում քարոզչական տպագիր նյութի պատվիրատուի, տպագրող կազմակերպության և տպաքանակի վերաբերյալ տեղեկություններ չպարունակող քարոզչական տպագիր նյութեր տարածելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

Նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության իրականացման համար օրենքով նախատեսված ժամանակահատվածում քարոզչական պաստառներ փակցնելու համար առանձնացված տեղերում փակցված քարոզչական պաստառները դիտավորյալ պոկելը, պատռելը կամ դրանց վրա գրառումներ կատարելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

(40[11] -րդ հոդվածը լրաց. 26.05.11 ՀՕ-165-Ն, խմբ. 25.05.16 ՀՕ-55-Ն)

Հոդված 40.12. Թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտման դեպքում ընտրական հանձնաժողովի խախտումը վերացնելու որոշման պահանջները չկատարելը

(վերնագիրը խմբ. 25.05.16 ՀՕ-55-Ն)

Թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտման դեպքում ընտրական հանձնաժողովի խախտումը վերացնելու որոշման պահանջները՝ դրանում նշված ժամկետներում չկատարելը կամ այդ մասին ընտրական հանձնաժողովին գրավոր չտեղեկացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Ազգային ժողովի, Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանու ընտրությունների դեպքում կուսակցության, կուսակցությունների դաշինքի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով, իսկ համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների դեպքում՝ թեկնածուի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Միևնույն ընտրության ժամանակ նույն խախտումը նույն սուբյեկտի կողմից մեկից ավելի անգամ կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր հաջորդ խախտման համար նախորդ դեպքի համար նշանակված տուգանքի կրկնապատիկի չափով:

Հոդված 40.13. Տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող՝ ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորումը սպասարկող անձի (մասնագետի) կողմից քվեարկության օրն իր լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը

Տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող՝ ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորումը սպասարկող անձի (մասնագետի) կողմից քվեարկության օրն իր լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

(40.13-րդ հոդվածը լրաց. 20.10.16 ՀՕ-159-Ն)

Հոդված 40.14. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի կողմից տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող՝ ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորումը սպասարկող անձին փոխարինելուց հրաժարվելը

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի կողմից տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող՝ ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորումը սպասարկող անձին փոխարինելուց հրաժարվելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

(40.14-րդ հոդվածը լրաց. 20.10.16 ՀՕ-159-Ն)

Հաստատված է
ՀՀ ոստիկանության պետի
21.01.2017թ. № 101-Ա
հրամանով

Ծ Ա Ռ Ա Յ Ո Ղ Ա Կ Ա Ն Գ Ր Ք Ո Ւ Յ Կ

Ընտրական տեղամաս թիվ _____ համայնք _____

Ոստիկանության վերակարգի ցուցակը

ավագ _____
անուն ազգանուն

_____

_____

_____

_____

_____